

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2014թ. սեպտեմբերի 2-ին ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Մ. Երիցյանը և առաջին կարգի մասնագետ Հ. Կարապետյանը մասնակցել են ք. Դիլիջանում կայացած «Անշարժ գույքի շուկայի գների հետազոտություն» թեմայով միջազգային սեմինարին,
- ✓ 2014թ. սեպտեմբերի 10-12-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է գ. Գեղադիրում կայացած «Անտառի կայուն կառավարում Հայաստանի կանաչ տնտեսության համար» աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2014թ. սեպտեմբերի 23-24-ը ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Հ. Սողոմոնյանը և մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Ազատյանը մասնակցել են ք. Երևանում կայացած 2016-2020թթ. ՄԱԿ-Հայաստան զարգացման աջակցության ծրագրի (ՄԱԿԶԱԾ) առաջնահերթությունների որոշման գործնական հանդիպմանը,
- ✓ 2014թ. սեպտեմբերի 26-ին ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետներ Ռ. Վարդանյանը և Լ.Գրիգորյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայ-Ամերիկյան համագործակցությունը գյուղատնտեսության ոլորտում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2014թ. սեպտեմբերի 30-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յ. Պողոսյանը և ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանի ինտեգրումը եվրոպական գիտական տարածաշրջան, մարտահրավերները և հնարավորությունները» խորագրով Եվրամիության FP7 EcoArm2 ERA նախագծի ավարտական միջազգային սիմպոզիումին,
- ✓ 2014թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Մարդկային կապիտալի ցուցանիշները» խորագրով սեմինարին,
- ✓ 2014թ. հոկտեմբերի 3-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը, ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետներ Ս. Հունանյանը և Ա. Սողոմանյանը, առաջատար

մասնագետ Ջ. Ավոյանը, առաջին կարգի մասնագետ Ս. Ջեյնալյանը, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Առուշանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց անցումը աշխատանքի շուկա» խորագրով սեմինարին,

- ✓ 2014թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը, ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ա. Մարտիրոսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Էլեկտրոնային ուսուցման պլատֆորմի և հետագա քայլերի ներկայացում» խորագրով հանդիպմանը,
- ✓ 2014թ. հոկտեմբերի 13-14-ը ՀՀ ԱՎԾ շինարարության վիճակագրության բաժնի պետ Ս. Պետրոսյանը և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Մ. Ծատուրյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Քաղաքների պլանավորման, բնակարանային տնտեսության էներգաարդյունավետության և աղետների ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2014թ. հոկտեմբերի 14-15-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ԵՄ կողմից ֆինանսավորվող «Clima East. աջակցության կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության քաղաքականությունը Ռուսաստանում և եվրոպական հարևանության արևելյան երկրներում» ծրագրի կլիմայի քաղաքանությունը ներկայացնող ազգային երկօրյա սեմինարին,
- ✓ 2014թ. հոկտեմբերի 14-15-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «2005-2013թթ. Հայաստանում զարգացման արդյունքների ՄԱԿ-ի ՁԾ գնահատում» խորագրով շահառուների հանդիպմանը,
- ✓ 2014թ. հոկտեմբերի 21-22-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ադվերանում կայացած «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի շրջանակներում ստեղծված Գետաավազանային կառավարման պլանավորման նպատակով Որոշումների կայացմանն աջակցող համակարգի խորհրդատվական խմբի հինգերորդ հանդիպմանը ,

- ✓ 2014թ. հոկտեմբերի 30-31-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած բարեկեցության վերաբերյալ գագաթաժողովին,
- ✓ 2014թ. հոկտեմբերի 30-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ-ԵՄ առևտրի տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի հերթական՝ 13-րդ նիստի նախանիստին: